ՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ԲԻԱՅՆԱԿԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԸ

(Արևմտյան Հայաստանի ուրարտական հուշարձանները շարքից)

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, Լ. Վ. ԱԲԱՋՅԱՆ

Վանի թագավորության մայրաքաղաք Տուշպան գտնվում էր Վանա լճի արևելյան ափին, ժամանակակից Վան քաղաքի տարածքում։ Այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում Բիայնիլիի (Ուրարտու) ուսումնասիրության համար։ Այստեղ գտնված բազմաթիվ սեպագիր արձանագրությունների ու հուշարձանների առկայությունը եվրոպական գիտությանը հայտնի դարձավ 1822 թ., երբ Փարիզում լույս ընծայվեց Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» գիրքը, որտեղ Վան քաղաքը նկարագրելիս հիշատակվում ես Ասորեստանի թագուհի Շամիրամի կողմից կառուցված շինություններն ու արձանագրությունները։ Տեղեկությունները ճշտելու համար 1827 թ. Փարիզի Ասիական ընկերության կողմից Վան է գործուղվում երիտասարդ գիտնական Շուլցը, որը կարճ ժամանակում հայտնաբերում է անծանոթ լեզվով գրված մոտ 200 արձանագրություն և նկարագրում մի շարք հուշարձաններ։

Սկսած Շուլցի աշխատանքներից մինչև օրս բազմաթիվ եվրոպական, բուրք, հայ գիտնականների կողմից ուսումնասիրություններ են կատարվել Վանում ու Վանա լճի ավազանում և կուտակվել է մեծ քանակությամբ նյութ, որը մինչ օրս չի ամփոփվել։ Առանձին աշխատություններում քննարկվել են սեպագրերի վերծանությունը, մյուսներում՝ ամրոցները կամ հնագիտական նյութը։ Առաջին ամփոփ աշխատանքը կատարվել է Բ. Բ. Պիոտրովսկու կողմից 1944 թ. հրատարակված «История и культура Урарту» գրքում, որտեղ մի գլուխ հատկացված է Վան քաղաքի պեղումներին[1]։ Սակայն վերջին 50 տարիների ընթացքում զգալի նյութ է կուտակվել ոչ միայն Վան քաղաքի, այլև Վանա լճի ավազանի հուշարձանների վերաբերյալ։ Հատկապես մեծ աշխատանք են կատարել անգլիացի գիտնական Ջ. Բարնեյը, որը 1950-ական թթ. ուսումնասիրել է Վանի ավազանի բիայնական հուշարձանները, մասնավորապես ամրոցները[2], Ռ. Բարնետը, որը հրատարակել է Բրիտանական թանգարանում պահվող Վանից պեղված նյութերը[3], Լեհման-Հաուպտը, որ մեծ դեր է խաղացել Թոփրակկալեհի ուսումնասիրության գործում[4], Ա. Էրզենը, որն ուսումնասիրել է Հայկաբերդ խոշոր ամրոցը և տվել նրա անրամասն նկարագրությունը[5]։

Ուսումնասիրվող շրջանի հուշարձանները հիմնականում ամրոցներ են, որոնք սովորաբար կառուցվում էին բլուրների վրա, տեսանելի հեռավորությամբ (մեկ օրվա ճանապարհ), որը հնարավորություն էր տալիս կրակի կամ այլ միջոցով արագ հաղորդել անհրաժեշտ տեղեկություններ։

---

[1] Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944.

[2] C. A. Burney. Urartian Fortresses and Towns in the Van Region. Anatolian Studies 7 (1957) p. 37—53.

[3] R. D. Barnett. The Excavations of the British Museum at Toprak Kale near Van. Iraq XII (1950).

[4] F. Lehman-Haupt. Armenien Einst und Jetzt, Vol. I, Berlin, 1910.

[5] A. Erzen. Çavuştepe. Ankara, 1978.

Ամրոցների մի մասն ունեն պալատական շինություններ, մեկ կամ մի քանի տաճար, բաց սրբատեղի, պահեստային խոշոր սենյակներ, բնակելի շինություններ, դամբարաններ։ Այդպիսի ամրոցները ունեցել են մեծաթիվ բնակչություն և նախատեսված են եղել ոչ միայն կայազորի, այլև բարձրաստիճան անձանց ընդունելության համար։

Փոքր ամրոցները սովորաբար զուրկ են խոշոր պալատական շինություններից և նախատեսված են եղել փոքր կայազորի համար։ Բնականաբար, վերջինները կատարել են միայն ճանապարհները վերահսկող դեր։

Բացառությամբ Թոփրակկալեի, Վանի ամրոցի, Արծկեի, Վերին ու Ստորին Անձավների ու Հայկաբերդի, մնացած մյուս ամրոցները ուսումնասիրված չեն։ Այդ պատճառով մենք հարկ համարեցինք քննարկել Վանի տավազանի մի շարք ամրոցների ճարտարապետությունն ու պեղված նյութը և ամփոփ կերպով ներկայացնել հայտնի հուշարձանները, որոնք ժամանակակից հրատարակություններում տրված են թուրքական անուններով։ Հոդվածում հնարավորին չափ տրված են ճշտված հայկական անունները[6]։

Վանա լճի արևելյան ափին գտնվող բիայնա-ան հուշարձաններից մեկն է Վանի ամրոցը։ Շուլցը 1828—29 թթ. արտաքին քննել է Վանի ամրոցում գտնված սեպագիրը և նկարագրել է Վանի ժայռափոր դամբարանները։ Վերջիններիս հատակագծերը տրվել են Լեյարդի և Լեհման-Հաուպտի կողմից։ 1911—1912 թթ. Ռուսական հնագիտական ընկերության արևելյան բաժինը Վան է գործուղում Հ. Օրբելուն։ Իր կարճատև այցելության ժամանակ նա ծանոթանում է Վանի շրջանի մի շարք հուշարձանների հետ, չափագրում Վանի բլրի հարավային լանջին կառուցված շինությունները, նկարում Վանի ամրոցի պաշտպանական կառույցները։ 1916 թ. Հ. Օրբելին իր երկրորդ այցն է կատարում Վան։ Արշավախմբի մասնակից Պ. Ե. Կընյագնիցկին մասնավորապես զբաղվում է ժայռափոր շինություններով, իսկ Հ. Օրբելին, բացի չափագրելուց ու լուսանկարելուց, պեղում է նաև բաց սրբատեղին՝ հյուսիսային լանջին գտնվող երկու խորշեր, որոնք հայտնի են «Դանձարանի դռներ» անվամբ։ Ըստ ավանդության այս դռների հետևում ոսկով ու թանկարժեք քարերով լի սենյակ կա, որը իբրև թե պահպանում են կրակոտ դեմքերով երկու պահապան։ Դռանը հսկում է նաև մի ահռելի օձ, որն ամեն դիշեր պառկելով նրա շեմին՝ պահպանում է գանձը։ Հենց այստեղ Հ. Օրբելին գտավ Սարդուրիի արձանագրությունը, մի «գանձ», որը լուսաբանեց Բիայնիլիի պատմության որոշ էջեր[7]։

Վանի ամրոցը մինչ օրս ամբողջությամբ պեղված չէ և հայտնի է առավելապես ժայռափոր դամբարաններով։ Ամրոցը կառուցվել է ժայռի վրա, մ. թ. ա. IX դարում, ուրարտական թագավոր Սարդուրի I-ի օրոք, ինչը վկայում է Խորխորյան դամբանասրահի արտաքին պատին գրված արձանագրությունը[8]։

Ամրոցի պաշտպանական կառույցները լավ են պահպանված և կառուցված են կոպտատաշ ու տեղ-տեղ սրբատաշ քարերից խոշոր աշտարակաձև որմնահեցերով։ Ամրոցի տարածքում պահպանված քարերի չափը (6 մ երկարություն, 0,75 սմ բարձրություն և մի քանի տոննա քաշ)[9] թույլ է տալիս ենթադրելու, որ այստեղ կառուցվել են շատ խոշոր շինություններ։ Ամրոցի տարածքում, բլրի լանջի վրա պեղվել է բաց սրբատեղի, 50 մ երկարությամբ և 10 մ լայնությամբ հարթակի վրա։ Հարթակի արևելյան և արևմտյան կողմերում կառուցված են խորշեր։ Արևելյանն ունի 2,80 մ լայնություն

[6] Օգտվելով առիթից, շնորհակալություն ենք հայտնում քարտեզագետ, պատմ. գիտ. դոկ. Բ. Հարությունյանին այս հուշարձանների հայկական անունների վերականգնման, ինչպես նաև ստորև նշվող Դարարեյ ամրոցի տեղագրությունը ճշտելու համար։

[7] Б. Б. Пиотровский. История и культура Урарту, с. 154.

[8] A. H. Sayce. The kingdom of Van (Urartu). Cambridge Ancient History, vol. III, 1954, p. 173.

[9] Th. Forbes. The Urartian Architecture. London, 1983, p. 28, pl. I.

և 2,20 մ խորություն։ Խորշի հատակին գտնվել է քառակուսի՝ 1,48×1,48 չափերով քարե հիմք, հավանաբար կոթողի համար։ Արևմտյան խորշը ունի 2,60 մ լայնություն և 2,30 մ խորություն։ Այստեղ պահպանվել է 1,56×1,46 մ հիմք և 2,27 մ բարձրությամբ կոթող Սարգուրի II-ի տարեգրությամբ։ Վանում գտնված կնիքը պատկերում է կոթողների առջև կանգնած, ձեռքերը բարձրացրած մարդու, որ հավանաբար երկրպագության կամ աղոթքի տեսարան է։ Ըստ երևույթին, բաց սրբատեղիները եղել են նախնիների երկրպագության վայր։

Վանի ամրոցի ժայռափոր դամբարաններից մեկը 20 մ² չափով և 2,55 մ բարձրությամբ մի սրահ է, որն ունի երեք կից սենյակ։ Մեկը 4,74×1,42×0,95 մ հարթ առաստաղով սենյակ է, երկրորդ սենյակի առաստաղը կամարաձև է։ Մայր ապառում փորված աստիճանը տանում է դեպի երրորդ սենյակը 1,07 մ լայնությամբ և 0,85 մ բարձրությամբ։ Թեև սենյակում որևէ նյութ չի գտնվել, կարելի է ենթադրել, որ հենց այստեղ է կատարվել թաղումը։ Վանի ամրոցի հարավային կողմից մայր ապառում փորված աստիճանները տանում են դեպի Խորխորյան կամ Արգիշտիի սենյակները։ Աստիճանների վերին մասում արտաքին պատին պահպանվել է Արգիշտի I-ի արձանագրությունը։ Դամբարանը բաղկացած է մեկ կենտրոնական և չորս օժանդակ սենյակներից։ Կենտրոնականը 10,50×3,50 մ չափերով սենյակ է, որի պատերին կան տասը խորշեր, հավանաբար, փորված զոհաբերությունների համար։ Պատերին 1 սմ խորությամբ և 31 սմ լայնությամբ բացվածքներ կան, որոնց կենտրոնում անցք է փորված։ Հավանաբար այդպիսի անցքերում ամրացված էին ճրագներ, որոնք չեն պահպանվել։ Սենյակի հատակին երկու փորվածք կա, մեկը՝ ուղղանկյուն 2,07×2,60 մ, մյուսը՝ քառակուսի 1,11×11 մ։ Կենտրոնական սենյակի արևելյան և արևմտյան կողմերում կան մեկական օժանդակ սենյակներ։ Նրանցից մեկում պատերի մեջ փորված են չորս խորշ, իսկ մյուսում՝ երեք։ Չորրորդ խորշի փոխարեն հորան է, որը հավանաբար նախատեսված է եղել ջրամատակարարման համար[10]։

Վանի ամրոցի հաջորդ ժայռափոր դամբարանը Նաֆթկոյուն է։ Այն հետաքրքիր է նրանով, որ նրա առաստաղն ունի կեղծ ծածկի տեսք և նույնիսկ ընդգծված են «գերանների» կլոր եզրերը։ Դռան մուտքից վեր կա բացվածք, որտեղ դուռը խոշոր սալով փակելուց հետո հավանաբար կատարել են զոհաբերություններ։

Մյուս դամբարանը Իշկալան է։ Այն տարբերվում է Խորխորյան սենյակներից և Նաֆթկոյուից նրանով, որ օժանդակ շինությունները խմբվում են ոչ թե մեկ, այլ երկու սրահների շուրջ։ Առաջին սրահի պատերը հավասար չեն։ Երկարությունը 9,28—9,38 մ, լայնությունը 5,49 և 5,97 մ, առաստաղը կամարաձև է։ Երկրորդ սրահը փոքր է (6,30×4,33 մ), հարթ առաստաղով։ Առաջին սրահին կից են երկու, երկրորդին՝ երեք սենյակ։ Հետաքրքիր է երկրորդ սրահին կից երրորդ սենյակը։ Այն ուղղանկյուն է, անհավասար պատերով, երկարությունը 4,80—4,82 մ, լայնությունը 2,60—2,71 մ։ Նրա հյուսիս-արևելյան պատի մոտ երեք աստիճանները տանում են դեպի 0,87 մ բարձրությամբ հարթակը։

Իշկալայից ցած գտնվում է անհավասար պատերով սրահ, իսկ նրանից արևելք ընկած են մի քանի ժայռափոր սենյակներ։ Մայր ապառում փորված 2 մ լայնությամբ 25 աստիճանները տանում են դեպի ժայռափոր սենյակների մուտքը։ Եվ վերջապես ժայռի հյուսիսային լանջին է գտնվում մեծ՝ 20,46×7,81—7,95 մ և 2,53 մ բարձրությամբ մի սրահ Մենուա թագավորի արձանագրությամբ[11]։

Վանա լճի ավազանի խոշոր ամրոցներից է Թոփրակ կալեն, որտեղ 1879 թ. պեղումներ են սկսում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Կլեյթոնը և

---

[10] Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959. с. 209.
[11] Б. Б. Пиотровский. История и культура Урарту. с. 267.

ամերիկյան միսիոներ Ռեյնոլսը։ 1880 թ. նրանց է միանում սիրող հնագետ Ռասամը, որը մինչ այդ պեղել էր Բալավաթյան բլուրը։ Նա հայտնաբերել էր Բալավաթյան դռների բրոնզե թիթեղները, որոնք պատկերում էին Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի արշավանքը Վանի ավազան։ Նրանց պեղումների շնորհիվ Թոփրակկալեի բլրի վրա բացվեցին պարիսպների մի մասը և տաճարի հետքերը։ Այս պեղումները հետաքրքրեցին տեղի բնակիչներին, որոնք գանձ գտնելու նպատակով սկսեցին պեղել Թոփրակկալեն։

Գիտական հիմքի վրա առաջին լուրջ արշավախումբը կազմակերպվեց 1898 թ. Հին Արևելքի մասնագետ պատմաբան Ֆ. Լեհման-Հաուպտի և հնագետ Բելքի ղեկավարությամբ։ Այս լայնածավալ աշխատանքների ժամանակ պեղվեցին բլրի տարբեր հատվածներ՝ տաճարի տարածքը, ամրոցի առանձին մասեր, բնակավայրը, մի շարք կացարաններ, ստորգետնյա սենյակի հետքեր, պահեստային սենյակ և այլն։ Ամրոցի և բնակավայրի պեղումները տվեցին հարուստ ու հետաքրքիր նյութ։ Այս պեղումները մեծ նշանակություն ունեցան Վանի թագավորության պատմության և մասնավորապես մշակույթի ուսումնասիրության համար, որովհետև միակ մեծածավալ աշխատանքներն են թագավորության մայրաքաղաքում։

1916 թ. Թոփրակկալեում սկսեց պեղել ռուսական արշավախումբը Ն. Մառի ղեկավարությամբ։ Սակայն այս անգամ նյութը ավելի աղքատիկ էր, որովհետև ամրոցը բավական տուժել էր ապօրինի պեղումներից։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թոփրակկալեն չի պեղվել և միայն 1960-ական թթ. թուրք հնագետ Ա. Էրզենը նորից անդրադարձավ այս հուշարձանին։

Թոփրակկալեն քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում է, բլրի վրա։ Այստեղ գտնված վահանների վրայի սեպագիր արձանագրությունները վկայում են, որ կառուցողական աշխատանքները սկսվել են Ռուսա I-ի (մ. թ. ա. 735—713 թթ.) և շարունակվել Ռուսա III-ի օրոք (մ. թ. ա. 685—639)։

Ցավոք, ամրոցի պեղումները սիստեմատիկ բնույթ չեն կրել և մանրամասն չեն նկարագրվել։ Նրա պաշտպանական կառույցները չեն պահպանվել, եղածն էլ տեղի բնակիչները օգտագործել են շինարարության մեջ։

Ավելի մանրակրկիտ է ուսումնասիրվել տաճարը և նրան հարող տարածքը։ Տաճարն ունեցել է քառակուսի, 13,80×13,80 մ, ընդգծված չորս որմնահեցերով հատակագիծ[12]։ Տաճարի հիմնապատերը կառուցված են սրբատաշ շախմատաձև դասավորված սև և սպիտակ քարերի 4 մ հաստությամբ շարվածքով, որի վրա բարձրանում էին հում աղյուսի պատերը։ Ցելլայի կենտրոնում պահպանվել է ուղղանկյուն պատվանդան արձանի համար, սակայն արձան չի գտնվել։ Տաճարի հատակը պատված է խճանկարով, հատակին կան չորս, 0,2×0,2 երկարությամբ և 0,03 և 0,04 մ խորությամբ քառակուսի փոսեր, ծածկված փայտե սալերով։ Դրանցից երկուսի մեջ եղել են բրոնզե թիթեղներ, շեղանկյուն և ուղղանկյուն ոսկե դրվագազարդով։ Տաճարի մուտքի դիմաց գտնվել է մարմարյա զոհասեղան[13]։ Տաճարի մուտքի դիմացի 20×20 մ բակը խճապատված է սև ու սպիտակ, կլոր ու շեղանկյուն քարերով[14]։ Տաճարային համալիրը տարածվում է բակի տարածքում և բլրի լանջերին, որտեղ համախմբվել են մի շարք շինություններ։ Տաճարից ոչ հեռու գտնվել է պահեստային սենյակ 20—25 կարասներով, յուրաքանչյուրը 500—600 լ տարողությամբ։ Տաճարի դիմաց, բլրի հարավ-արևմտյան լանջին, մայր ապառաժում կտրված 56 աստիճանները տանում են դեպի ժայռափոր սրահը։ Այս սրահի նշանակությունը հայտնի չէ։ Այստեղ, մայր ապառաժի մեջ, ավազանի նման փորվածք կա, որը կարող էր ծառայել որ-

---

[12] Th. Forbes. Op. cit., p. 81.

[13] H. F. B. Lynch, Armenia: Travels and Studies. Vol. II. Beirut, 1965 p. 63.

[14] R. D. Barnett. Op. cit., p. 63.

պես լոգարան։ Սակայն, եթե ժայռափոր այս սրահը դիտվի որպես դամբարան, ապա ավազանը կարող էր ծառայել որպես սարկոֆագ[15]։

Թոփրակկալեում Կլեյթոնի, Ռեյնոլդսի և հատկապես Ֆ. Լեհման-Հաուպտի կողմից կատարված պեղումները տվեցին հսկայական հնագիտական նյութ, որը դժբախտաբար մինչև օրս ուսումնասիրված չէ։ Եթե Բրիտանական թանգարանում պահվող գտածոները և հատկապես մետաղյա իրերը քիչ թե շատ ուսումնասիրվել են Ռ. Բառնետի կողմից, ապա Բեռլինի թանգարանում պահվողներից առավել հայտնի է միայն Ֆ. Լեհման-Հաուպտի կողմից հրատարակվածը, որը կազմում է գտածոների չնչին մասը։ Համեմատաբար լավ է ուսումնասիրված ապօրինի պեղումներից գտնված նյութը՝ հիմնականում բարձրարվեստ փոքր արձանիկներն ու զարդերը։

Ինչ վերաբերում է Ն. Մառի պեղումներին, ապա դրանք գրեթե կրկնում են Ֆ. Լեհման-Հաուպտի կողմից գտնվածները և նույնպես քիչ են ուսումնասիրված։ Հրատարակված նյութը կարելի է բաժանել մի քանի մեծ խմբի։ Խեցեղենը ունի կարևոր նշանակություն հուշարձանների ստույգ թվագրության համար։ Այս գործում մեծ դեր է կատարել Ս. Կրոլը, որն ուսումնասիրել է Իրանի ուրարտական հուշարձանների խեցեղենը և տվել նաև ուրարտական մյուս հուշարձանների խեցեղենի համեմատական աղյուսակը[16]։

Վանից, ինչպես և այլ հուշարձաններից գտնված խեցեղենը բազմազան է, ոչ միայն ձևերով, այլև չափսով։ Հանդիպում են 1600 լ տարողությամբ կարասներից մինչև 2 սմ բարձրություն ունեցող անոթներ։ Թոփրակկալեում գտնված խեցեղեն իրերը հիմնականում կարմիր են, թեև հանդիպում են դեղին և սև գույնի անոթներ ևս։ Ըստ Ս. Կրոլի, խոշոր կարասներն ունեն ուղիղ, փոքր-ինչ դուրս ճկված շուրթ։ Նմանատիպ կարասներ գտնվել են Բաստամից, Կարմիր բլուրից, Ներքին Խնձորից (Կայալիդերե), Արգիշտիխինիլիից և այլն[17]։ Սակայն ի տարբերություն այլ հուշարձանների, Թոփրակկալեում գտնվել են կարասների առանձին շուրթեր, ցուլերի վրա հարձակվող գիշատիչների վերադիր պատկերներով։ Գիշատիչները պատկերված են բաց երախներով և ընդգծված ժանիքներով[18]։ Գտնվել են նաև մեկ կանթանի կարմիր անգոբապատ սափորներ, որոնց օրինակները հայտնի են Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից, Իգդիրից, Ճմինից (Ալթինթեփե), Ներքին Խնձորից, Բաստամից և այլն[19]։ Բազմազան են թասերն ու քրեղանները։ Աչքի են ընկնում կարմիր անգոբապատ, ներճկված շուրթով թասեր, հայտնի՝ Նորշունթեփեից, Անձավից, Բաստամից, Կարմիր բլուրից, Արինբերդից, Պադոցից[20]։ Հանդիպում են նաև թասեր, որոնց հատակը քիչ ներճկված է, սրանք նույնպես ունեն զուգահեռներ Ներքին Խնձորից և Արծկեից[21]։ Շքեղ խեցեղենի խմբին են պատկանում փիալաները, որոնք ունեն կլոր հատակներ և լայնացող ուղիղ շուրթ։ Սրանց զուգահեռները կան Ճմինում, Կարմիր բլուրում, Արգիշտիխինիլիում[22]։ Կան նաև մեծ ու փոքր քրեղաններ։ Այդպիսի քրեղաններ հանդիպում են նաև Իգդիրում, Արգիշտիխինիլիում, Ճմինում, Պադոցում և այլ հուշարձաններում[23]։ Ինչպես Կարմիր բլուրում, այնպես էլ Թոփրակկալեում հանդիպում են պատերին անցքեր ունեցող գավաթ-

---

15 Б. Б. Пиотровский. История и культура Урарту, с. 150—151.

16 S. Kroll. Keramik Urartaischer Festungen in Iran. Berlin. 1976.

17 Նույն տեղում, էջ 134—135։

18 Б. Б. Пиотровский. История и культура Урарту, с. 243.

19 Նույն տեղում, էջ 128։

20 Նույն տեղում, էջ 111—112։

21 Նույն տեղում, էջ 114։

22 Նույն տեղում, էջ 115։

23 Նույն տեղում, էջ 116—117։

ներ, լայն սնամեջ բռնակով։ Այդպիսի գավաթներն օգտագործվում էին կարասները ծծմբով ախտահանելու համար[24]։

Բացի շքեղ քրեղաններից, գտնվել են նաև ձեռքով պատրաստած և վատ թրծված խեցեղեն իրեր, ինչպիսիք հանդիպում են բոլոր հուշարձաններում։

Մետաղյա նյութերի մեջ հատկապես շատ են երկաթյա իրերը՝ կեռ դանակներ, մանգաղներ, նշաձև նետասլաքներ, եռաժանիներ, կացիններ, խոփեր, ձիասանձեր, դռան փականներ։ Պեղումների ժամանակ գտնվել են նաև բրոնզյա իրեր։

Հետաքրքիր են 10—80 սմ տրամագծով վահանները, զարդարված առյուծների, ցուլերի, վարդյակների պատկերներով։ Վահաններից մեկի վրա պահպանվել է «Ռուսա էրիմենայի որդի» արձանագրությունը։ Բրիտանական և Բեռլինի թանգարաններում պահվող վահանի բեկորներից վերականգնվել է մի վահան, որի ճիշտ վերականգնությունը ապացուցվեց Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի Կարմիր բլուրում գտնված ամբողջական վահաններով։ Ելնելով դրանց համեմատությունից, Բ. Պիոտրովսկին գտնում է, որ այս նվիրական վահանների պատրաստման տեխնիկան ոչ մի փոփոխության չի ենթարկվել այն 150 տարվա ընթացքում, որ բաժանում է Արգիշտիի վահանը Ռուսա III-ի Թոփրակկալեում գտնված վահանից։ Սակայն այս ճիշտ դիտողությունը վերաբերում է խիստ կանոնիկ իրերին։ Մնացած իրերը այդ ժամանակահատվածում զգալի փոփոխություններ են կրել։

Բրոնզե իրերից տաճարային համալիրում գտնվել է 136,5 մ բարձրությամբ աշտանակ։ Այն ունի երեք ոտք, որոնց վրա ամրացված են մարդկային դեմքերով ցուլեր, իսկ նրանցից բարձր՝ առյուծների փոքր քանդակներ։ Վերին մասում աշտանակը բաժանվում է չորս հորիզոնական տեղադրված օղակների, որոնց վրա դրվում էին ճրագներ։

Թոփրակկալե ամրոցը կործանվել է հանկարծակի գրոհի ժամանակ, որի մասին են վկայում հրդեհի հետքերը։

Վանա լճի ավազանի մյուս ամրոցը Ներքին Անձավն է, որը գտնվում էր Վան քաղաքից մոտ 17 կմ[25] հյուսիս-արևելք և պահպանում էր թագավորության կենտրոնից դեպի հարավ-արևելք տանող ճանապարհը։ Այն տեղադրված է ձվաձև բարձունքի վրա և ունի հյուսիս-հարավ ուղղությամբ ուղղանկյուն հատակագիծ, ինչ բնորոշ է ուրարտական վաղ շրջանի ամրոցներին։ Ներքին Անձավի հիմնադրումը հավանաբար եղել է Իշպուինիի օրոք (մ. թ. ա. IX դար)։ Ամրոցի պաշտպանական պարիսպները ամրացված չեն ո՛չ որմնահեցերով, ո՛չ աշտարակներով։ Միայն մուտքը դեպի ամրոց, որը հավանաբար եղել է արևելյան մասում, ունեցել է աշտարակներ։ Ամրոցը մեծ չէ, նրա երկարությունը մոտավորապես 9 կմ, լայնությունը 68 կմ է, ընդհանուր տարածքով կես հա-ից ավելի։ Տասնյակ այլ փոքր ամրոցների նման այն ծառայել է որպես զինվորական հենակետ՝ վերահսկելով Իրան տանող ճանապարհը հյուսիսում։

Ներքին Անձավ ամրոցից հարավ-արևելք գտնվում է Վերին Անձավ ամրոցը, որը նույնպես վերահսկում է հարավ-արևելք տանող ճանապարհը։ Այն կառուցվել է ավելի ուշ՝ Մենուայի օրոք (մ. թ. ա. 810—786 թթ.)[26]։ Ամրոցը, որի պարիսպները լրիվ չեն պահպանվել, արևմտյան և հյուսիս-արևմտյան հատվածներում ուղղանկյուն է, մոտ 314 մ երկարությամբ և 250 մ լայնությամբ, ընդհանուր տարածքով մոտ 8 հա։ Ամրոցը բաղկացած է երկու միջնաբերդից։ Մեկը 187 մ երկարությամբ և 125 մ լայնությամբ հյուսիսից հարավ ուղղված, երկրորդը ավելի փոքր՝ 15 մ երկարությամբ և մոտ 50 մ լայնությամբ։ Երկուսն էլ պաշտպանված են պարսպաշարով, որը տեղ-տեղ

---

24 Նույն տեղում, էջ 129։

25 Այս և մյուս ամրոցների հեռավորությունը Վանից վերցված են սխեմատիկ քարտեզից և տրված են ուղիղ գծով։

26 Th. Forbes. Op. cit., p. 27.

պահպանվել է։ Երևում են նաև որմնահեցերի հետքերը։ Համեմատաբար լավ է պահպանվել հյուսիս-արևմտյան պարսպաշարը։ Այս մասում որմնահեցերը քիչ են, քանի որ բլուրը զառիթափ իջնելով դաշտավայր՝ ստեղծում է բնական խոչընդոտ դեպի ամրոց։ Բլրի հարավային լանջերին երևում են աշտարակի հետքեր։ Ներքին պարսպաշարի հաստությունը 4 մ է և կառուցված է կիկլոպյան շարվածքով[27]։ Ամեն 10 մ վրա պատերից առաջանում են 2,5 մ լայնությամբ որմնահեցեր։ Բլրի հարավային մասում պահպանվել է քարերի մեծ կույտ, որը հավանաբար եղել է աշտարակ։ Դեպի հարավ բլրի լանջը կտրուկ իջնում է դաշտավայր, որտեղ դտնվում է Ստորին քաղաքի պարսպապատ տարածքը (մոտ 100 մ հյուսիսից հարավ և 200 մ արևելքից արևմուտք)[28]։ Ամրոցի հարավային մասում մայր ապառում կտրված աստիճանները տանում են դեպի ժայռափոր արհեստական կացարանները։

Վանա լճի արևելյան ափին Վան քաղաքից մոտ 5 կմ հյուսիս գտնվում է փոքր ամրոցներից մեկը՝ Լեզկը (Կալեսիկ), որը կառուցված է լճի երկայնքով և վերահսկում է հյուսիսից Վան տանող ճանապարհը։ Այն ունի անառիկ դիրք և միայն հարավ-արևմտյան մասն է թույլ տալիս հեշտությամբ մոտենալ ամրոցին։ Սակայն այդ նեղ ճանապարհը վտանգի ժամանակ փակում էին խոշոր սալերով[29]։

Վան քաղաքից մոտ 12 կմ հարավ գտնվում է Զիվստան ամրոցը (Զիվիստանկելե)։ Այն տեղադրված է ուղղանկյուն բարձունքի վրա և կրկնելով տեղանքի ձևը, ունի ուղղանկյուն, արևելքից արևմուտք ուղղված հատակագիծ։ Միջնաբերդի պատերի երկարությունը 70 մ և լայնությունը 50 մ է։ Այս ամրոցը տարբերվում է վաղ շրջանի ամրոցներից նրանով, որ կառուցված է ոչ թե արհեստականորեն հարթեցված, այլ բնական բլրի վրա, որը և հնարավորություն է տվել Զ. Բարնեյին թվագրելու այն մ. թ. ա. VIII—VII դդ.։

Ամրոցի միջնաբերդը բոլոր կողմերից շրջապատված է եղել պարիսպներով, որոնցից սակայն փոքր մասն է պահպանվել։ Բլրի արևմտյան մասում պատերն ունեն ելուստներ, որոշ տեղերում նկատվում են որմնահեցեր։ Տեղանքը չի բավարարել պաշտպանական կառուցներին, որի պատճառով արևմտյան մասում դարավանդը լայնացված է։ Ամրոցի արևելյան մասում մայր ապառում փորված է ավազան, հավանաբար ջուր կուտակելու համար։ Պահպանվել են նաև քարե շինությունների հետքեր։ Բլրի հյուսիսային մասում 15 մ լայնությամբ երեք դարավանդներ իջնում են դեպի Ստորին քաղաք[30]։

Վանա լճի ավազանում գտնվող հաջորդ փոքր ամրոցը Երիշատն է (Հիշեթ), որը տեղադրված է անմիջապես լճի ափին՝ Վան քաղաքից մոտ 50 կմ հարավ և վերահսկում է Գեվաշ դաշտավայրից Վան տանող ճանապարհը։ Ամրոցն ունի ոչ կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ՝ արևելյան պատի երկարությունը 125 մ, արևմտյան պատինը՝ 71 մ է։ Ամրոցի լայնությունը մոտ 93,7 մ է։ Բլրի հյուսիսային, արևելյան և արևմտյան լանջերը զառիթափ են։ Հարավում, որտեղից նա միանում է դաշտավայրին, ամրոցը ամրացնելու համար կառուցված են իրարից մոտ 25 մ հեռավորությամբ և 100 մ երկարությամբ երկու խանդակ։ Ամրոցի մուտքը չի պահպանվել, ելնելով տեղանքից այն պետք է լիներ հարավ-արևելյան պատի մոտ, խանդակների և ժայռի արանքում։ Ամրոցը զբաղեցնում է 1,5 հա։

Անհավատի բերդը (Կեֆիր կալեսի) գտնվում է Վանա լճից հյուսիս, Սիփան սարի ստորոտում։ Ամրոցը կառուցված է 2400 մ բարձրության անառիկ բլրի վրա, հարավ-արևմուտք-հյուսիս-արևելք ուղղվածությամբ։ Հարա-

---

27 C. A. Burney. Op. cit., p. 44.

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում, էջ 45։

30 Նույն տեղում, էջ 47։

վային և հարավ-արևելյան հատվածը խիստ զառիթափ է, այդ պատճառով ամրացված չէ։ Հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածում կառուցված է միաշարք պարիսպ, սակայն ծայր հյուսիս-արևմտյան և արևմտյան հատվածում, որտեղ տեղանքը իջնում է դեպի հարթություն, պատերը խիստ կտրտված են և ամրացված խոշոր աշտարակներով։ Մուտքը տեղադրված է ամրոցի հյուսիս-արևմտյան մասում և ունի հետաքրքիր ձև։ Արևմտյան և հյուսիս-արևելյան պատերը իրար չեն միանում, այլ զուգահեռ շարունակվում են՝ թողնելով նեղ միջանցք ամրոց մանելու համար։ Այս մասը ամրացված է աշտարակներով և խիստ կտրտված պատերով, որոնք նույնպես կատարում են աշտարակի դեր։ Ամրոցի երկարությունը մոտ 500 մ է, լայնությունը 210 մ։ 3—4 մ հաստությամբ քարե հիմքերի վրա պահպանվել են հում աղյուսե պատեր։ Չնայած մեծ չափերին՝ մոտ 10 հա, ամրոցի ներսում կան երեք ժայռային ելուստներ, որոնք զգալի կերպով փոքրացնում են ամրոցի օգտակար տարածքը։ Ուրարտական նյութի բացակայությունը կասկած է հարուցում՝ արդյո՞ք ամրոցը ուրարտական է։ Սակայն հաշվի առնելով պատերի հաստությունը և կառուցողական տեխնիկան Զ. Բարնեյը թվագրում է այն ուրարտական ժամանակաշրջանով։ Թերևս ամրոցը կառուցվել է հին կիկլոպյան ամրոցի տեղում, ինչպես Կարմիր բլուրը և մի շարք այլ ամրոցներ։ Նկատի ունենալով տեղադրությունը, մեծությունը և կառույցների բացակայությունը կարելի է ենթադրել, որ վաղ շրջանում ամրոցը ծառայել է կենդանիների հոտերը թալանից պաշտպանելու, իսկ ուրարտական շրջանում՝ որպես պաշտպանական և վերահսկող ամրոց։

Հավանաբար այս տիպի ամրոցներն է Սարգոն II-ը որակել որպես «փայլ լեռնագագաթին», հաշվի առնելով բարձրությունը և անառիկ դիրքը[81]։

Վանի ավազանի խոշոր ամրոցներից է Արծկեի բերդը (Կեֆ կալեսի), որը գտնվում է Վան քաղաքից մոտ 70 կմ հյուսիս-արևելք։ Այն կառուցվել է մ. թ. ա. VII դարում, Ռուսա II-ի գահակալության օրոք (մ. թ. ա. 685—639 թթ.)[82]։ Արծկեի բերդը խոշոր բնակավայր է։ Քաղաքի պարիսպների հաստությունը 3,4 մ է։ Քարե հիմքի վրա կառուցվել են հում աղյուսի պատեր։ Աղյուսի չափերը ավելի մեծ են, քան մյուս ուրարտական հուշարձաններում օգտագործվածներինը՝ 53×35×14 սմ և 53×53×14 սմ[83]։ Ամբողջ արևմտյան պատը, հարավային և արևելյան պատի մի մասը կառուցված են զիգզագաձև։ Հարավ-արևելյան մասում պահպանվել են խոշոր աշտարակի հետքեր։ Աշտարակի հիմքը կառուցված է 1,5 մ երկարությամբ քարահողային լիցքով, երկշարք քարերով։ Միջնաբերդը տեղադրված է բլրի հյուսիս-արևմտյան բարձր մասում և արևմուտքից միանում է քաղաքին երկշարք պարիսպով։ Ամրոցի մնացած մասերում պարիսպը չի պահպանվել։ Ամրոցից արևելք և քաղաքի հյուսիս-արևելյան պատի եզրին պահպանվել են քառակուսի հիմքով շինության հետքեր, որը հավանաբար եղել է դեպի դաշտ տանող մուտքը։ Այստեղ է բացվել կոպտատաշ քարերով սալապատ ճանապարհը, որը ամրոցն ու բնակավայրը կապել է Արծկեի դաշտավայրի հետ։ Զ. Բարնեյի տված հատակագծում քաղաքի շինությունները չեն երևում և միայն բնակավայրի հյուսիս-արևելյան անկյունում նկատվում են ուղղանկյուն շինության հետքեր[84]։

Արծկեի ամրոցում պեղվել է երկու սյունազարդ դահլիճ։ Դրանցից մեկում սյուների հիմքը 2,99×2,00×1,53 մ է, կառուցված են սրբատաշ բազալտից, որոնց վրա եղել են աղյուսե սյուներ[85]։ Մյուս դահլիճի սյունա-

---

81 Նույն տեղում, էջ 51։

82 Bilgiç, Emin and Öğün. Bakı. Excavations at Kef Kalesi of Adilcevaz. — Anatolia, vol. 8, 1964, p. 120.

83 Th. Forbes. Op. cit., p. 52.

84 C. A. Burney. Op. cit., p. 50—51, pl. 12.

85 Th. Forbes. Op. cit., p. 52.

խարիսխները ավելի մեծ են՝ 3,00×3,00 մ։ Երկու դեպքում էլ դահլիճներում սյուները դրվել են երկուական շարքով։ Երկրորդ դահլիճում դրանք դրվել են 4,5 մ հեռավորության վրա, ամեն շարքում երեքական սյուն։ Լայնական պատերի երկայնքով պահպանվել է մեկական սյունախարիսխ։ Արծկեի սյունազարդ դահլիճները ծառայել են թե՛ աշխարհիկ, թե՛ կրոնական արարողությունների համար, որի մասին է վկայում դահլիճներից մեկում գտնված արձանագրությունը[36]։

Արծկեի ամրոցը հայտնի է նաև իր բարձրաքանդակներով։ Առաջինը Լեհման-Հաուպտն էր, որ նրա տարածքում գտավ տարբեր բարձրաքանդակների բեկորներ, որոնցից աչքի էր ընկնում ցուլի պատկերը[37]։

Արծկեի ամրոցի տարածքում Զ. Բարնեյը գտել է բարձրաքանդակի 6 բեկոր, որտեղ պատկերված է ամպրոպի աստված Թեյշեբան։ Բարձրաքանդակի նախնական տեսքը վերականգնել է Ու. Սեյդը[38]։ Համեմատաբար լավ է պահպանվել աջակողմյան աստվածը, որը կանգնած է ցուլի վրա։ Նրա առջևում և հետևում պատկերված են կենաց ծառեր։ Մի ձեռքում նա պահում է թաս, մյուսում՝ ճյուղ։ Երկար թևքերով, ծնկից ցած իջնող հագուստի վրայից իջնում է մինչև կոճերը հասնող թիկնոցը։ Աստծու գլխին եղջյուրավոր խույր է՝ զարդարված ասաղերով ու վարդյակներով։ Աստծո մի ոտքը ցուլի գլխին է, մյուսը՝ մեջքին։ Ցուլից պահպանվել են իրանն ու գլուխը։ Զախակողմյան քանդակը վատ է պահպանվել։ Երևում են կենաց ծառի մի մասը, աստծու ձեռքը, ցուլի գլուխը, ետևի ոտքն ու պոչը։ Սակայն նրանք հավանաբար տեղադրված են եղել սիմետրիկ (նման ասորեստանյան օրթոստատներին), դռան երկու կողմում։ Բարձրաքանդակի հետ գտնված արձանագրությունը պատկանում է Ռուսա II-ի ժամանակաշրջանին (մ. թ. ա. 685—639)[39]։

1964—1965 թթ. աշխատանքների ժամանակ պեղվել է բարձրաքանդակի մի խոշոր բեկոր, 1,40×1,140×1,10 մ չափով[40]։ Բազալտի վրա պատկերված է երեք ատամնավոր աշտարակներով շենք։ Կենտրոնական աշտարակի երկու կողմերում պատկերված են կտուցների մեջ ճագարներ բռնած թռչուններ։ Շենքի տիմաց, կենտրոնական աշտարակի երկու կողմում պատկերված են առյուծների վրա կանգնած թևավոր աստվածներ։ Նրանց հագուստը համապատասխանում է վերը նշված բարձրաքանդակի վրա պատկերված աստծու հագուստին։ Առյուծները բաց երախով են։ Իրենց չափերով բարձրաքանդակի վրայի աստվածները շենքի չափերի համեմատ շատ մեծ են։ Կարելի է ենթադրել, որ նրանք եղել են արձաններ և դրվել են շենքի գլխավոր մուտքի երկու կողմում, շենքից որոշ հեռավորության վրա։

Վանա լճի ավազանի հաջորդ խոշոր ամրոցը Հայկաբերդն է (Զավուշթեփե)։ Այն գտնվում է Վան քաղաքից 50 կմ հարավ-արևելք՝ վերահսկելով Վանից Հադամակերտ (Բասկալե) տանող ճանապարհը։ Հայկաբերդը ուսումնասիրվել է գրեթե մեկ դար՝ Ֆ. Լեհման-Հաուպտի[41], Հ. Օրբելու[42], Զ. Բար-

---

[36] B. Oglin. Die Ausgrabungen von Kef Kalesi die Urartäische kunst.—Archäologischer Anzeiger, vol. 82, 1967, S. 491, 497.

[37] F. Lehman-Haupt. Armenien Einst und Jetzt, vol. II, part. II, Berlin, B. Behrs Verlag/Friedrich Feddersen, 1931, S. 745.

[38] U. Seidl. Torschützende Genien in Urartu, Archeologische Mitteilungen aus Iran, vol. 7, 1975, pl. 44.

[39] C. A. Burney and G. R. J. Lawson. Urartian Reliefs at Adilcevaz on lake Van and a rock relief from Karasu near Bircik. — Anatolian Studies. vol. 8, 1958

[40] Bilgiç. Emin and Öglin. Bakı Second season of Excavations at Kef Kalesi of Adilcevaz. — Anatolia, vol. 9, 1965, p. 16.

[41] F. Lehman-Haupt. Armenien Einst und Jetzt 11/1. Berlin, 1910.

[42] И. А. Орбели. Раскопки двух ниш на Ванской скале.—Н. Я. Марр, И. А. Орбели. Доклады. Петроград, 1922.

նեյի[43] կողմից, որոնք հիմնականում չափագրել և ուսումնասիրել են վերգետնյա հուշարձանները։ Հայերեն լեզվով այս հուշարձանի ամփոփ նկարագրությունը և նյութերի նոր մեկնաբանությունը տրվել է Ս. Եսայանի և Գ. Քիլիմչյանի կողմից[44]։ Լայնածավալ պեղումներ կատարվել են սկսած 1961 թ., Աֆիֆ Էրզենի կողմից[45]։

Ամենայն հավանականությամբ այս ամրոցը Սարգուրի խարգա ամրոցն է, որ հիշատակվում է Սարգուրի II-ի արձանագրություններում[46]։ Գտնված մեկ այլ արձանագրության շնորհիվ հաստատվում է ամրոցի հիմնադրման ժամանակը՝ մ. թ. ա. VIII դար, Սարգուրի II-ի գահակալության տարիներին (մ.թ.ա. 764—735 թթ.)։

Ամրոցը տեղադրված է բլուրների երկայնքով և բաղկացած է վերին ու ստորին միջնաբերդերից։ Ամրոցի արևմտյան մասում, պաշտպանական կառույցներից դուրս, պահպանվել է պարսպապատ տարածք՝ կառուցված կիկլոպյան շարվածքով։ Ամրոցի պատերը սրբատաշ քարերից են։ Պաշտպանական կառույցները բլրի արհեստական դարավանդների վրա են և կատարում են ոչ միայն պաշտպանական, այլ նաև հենարանի դեր։ Ամրոցի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասում փորված են խանդակներ, ինչպես և Երիշատ ամրոցում։ Խանդակներից մեկը 8 մ լայնությամբ և խորությամբ է, մյուսը ավելի փոքր։ Սրանք կրկնապատկում էին ամրոցի պաշտպանական հնարավորությունը։

Վերին միջնաբերդը ունի ուղղանկյուն, 80×65 մ չափով պարսպապատ տարածք։ Պարսպի երկու կողմից, իրարից 7,5—10 մ հեռավորության վրա տեղադրված են հնգական որմնահեցեր։ Ամրոցի արևելյան մասում պահպանվել են երկրորդ պարսպաշարի հետքեր՝ կառուցված ղրսհապատ եղանակով։ Հյուսիս-արևելյան կամ վերին միջնաբերդում բացվել է 4,5×4,5 չափով հարթակ, որտեղ հավանաբար եղել է տաճար։ Նման շինություն գտնվել է և ստորին միջնաբերդում։ Վերին միջնաբերդից 30 մ ցած տեղադրված ստորին միջնաբերդը իր տարածքով ավելի մեծ է և գրավում է 430×70 մ տարածք։ Այստեղ պեղվել են պալատական համալիրին պատկանող շինություններ, պահեստային սենյակներ, տաճար։ Պալատական համալիրին պատկանող կենտրոնական դահլիճը՝ 33×15 մ չափով, երկու կողմերից ունեցել է կից շինություններ կամ միջանցքներ։ Ինչպես և Արծկեի դահլիճները, այն եղել է սյունազարդ։ Երկու շարք խոշոր սյունախարիսխների վրա դրվել են աղյուսե սյուներ[47]։

Երկրորդ, 24×20 մ չափով սյունազարդ դահլիճում պահպանվել են որմնանկարների հետքեր։ 4,5×4,5 չափերով շինությունը տաճար է, կառուցված բազալտե սրբատաշ քարերից, որոնց վրա բարձրանում էին հում աղյուսե պատերը։ Պատերին պահպանվել են որմնանկարների հետքեր՝ կապույտ հիմնապաստառի վրա բուսական ու երկրաչափական մոտիվներ կատարված սև, կապույտ ու դեղին գույներով[48]։ Տաճարի դիմաց, 21,5×21,5 մ բակում, դրվել են զոհասեղաններ, ինչպես Թուիրակկալեում, Ալթինթեփեում և այլ ուրարտական հուշարձաններում։ Կրոնական արարողություններ կատարվել են թե՛ տաճարում, թե՛ բակում։ Տաճարին կից գտնվել է պահեստային սենյակ 200 կարասներով։

---

43 C. A. Burney. Op. cit.

44 Ս. Ա. Եսայան, Գ. Ս. Քիլիմչյան. Հայկարերդ ամրոցը.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1991 № 6։

45 A. Erzen. Op. cit.

46 N. Adontz. Histoire d'Armenie. Paris, 1945, p 236.

47 Th. Forbes. Op. cit., p. 52.

48 A. Erzen, E. Bilgiç, Y. Boysal, B. Ögün, Toprakkale ve Çavuştepe Kazilarli Rapozu 1962 in Türk Arkeologin Dengasi XII/4, 1962, p. 12.

Ստորին միջնաբերդի տարածքում գտնվում է մի փոքր բերդ՝ Ուշկալեն։ Առանձնահատուկ ուշադրության են արժանի այս ամրոցի շինությունների պատուհանները, որոնք ծածկվում էին փեղկի դեր կատարող քարե սալով։ Գտնված արձանագրությունը վկայում է, որ այստեղ Սարդուր II-ի օրոք կառուցվել են պահեստներ։ Պեղված երկու սենյակներում հայտնաբերվել են զենքեր, նվիրատվական արձանագրություններ, որմնանկարների հետքեր՝ ընկած երկրորդ հարկից։

Դեպի միջնաբերդ տանող գլխավոր մուտքը եղել է նրա հարավ-արևելյան մասում. այստեղ մայր ապառում փորվել են 2 մ լայնությամբ աստիճաններ, որոնց երկու կողմերում սրբատաշ պատեր կան։ Սա կատարում էր նաև պաշտպանական դեր, որովհետև հարկ եղած դեպքում այս մուտքը կարելի էր փակել։ Հայկաբերդ ամրոցի կառույցների քանակը, կառուցման որակը, հարուստ ու բազմատեսակ իրերը թույլ են տալիս ենթադրելու, որ այն ունեցել է ոչ միայն պաշտպանական ու վերահսկողական նշանակություն, այլև հանդիսացել է նստավայր թագավորության բարձրաստիճան անձանց կամ նույնիսկ թագավորական ընտանիքի համար։ Հայկաբերդի հրատարակված նյութը հարուստ չէ։ Ա. Էրզենը ներկայացրել է մեծամասամբ մ. թ. ա. VII դարի նյութերը (նպատակ ունենալով հետագայում հրատարակել VIII դարի նյութերը), որոնք բաղկացած են մի քանի ոսկրե իրերից և երկու կնիքից։

Երկաթյա նետասլաքների մեծ մասը տերևաձև է, երկար, կլորավուն պոչով, որի վերին մասում խնձորակ կա[49]։ Նման նետասլաքներ հայտնի են Կարմիր բլուրից[50], Էրեբունիից[51], Իգդիրից[52] ու ուրարտական մի շարք այլ հուշարձաններից և թվագրվում են մ. թ. ա. VIII—VII դդ.։ Գտնվել են նաև բրոնզե նետասլաքներ, որոնք տերևաձև են, սրածայր կարճ ճանկերով կամ առանց ճանկերի։ Հազարավոր սկյութական նետասլաքներ են գտնվել Հայկաբերդի պարիսպների տակ[53]։

Մ. թ. ա. VII դարին պատկանող իրերից գտնվել է մի թաս։ Այն ունի փոքր-ինչ լայնացող իրան և կտրված շուրթ։ Թասի եզրերը զարդարված են ուղղահայաց ներճկված գծերով։ Նման անոթներ, առանց նախշազարդի, հայտնի են պատահաբար հայտնաբերված նմուշներով, որոնք այժմ պահվում են եվրոպական թանգարաններում[54]։

Համեմատաբար մեծ թիվ են կազմում խեցեղեն իրերը։ Պեղվել են մեկ և երկու բռնակով սափորներ և երկու անկանթ սափորներ[55]։ Մեկ բռնակով սափորները մեծ չեն՝ 15—16 սմ բարձրությամբ կարմիր, անգոբապատ, ուռուցիկ իրանով, քիչ լայնացող վզով և օյնախոյայի տիպի շուրթով։ Երկանթանի սափորը պատված է դարչնագույն անգոբով։ Բռնակները ուսերին

---

49 Ս. Ա. Եսայան, Գ. Ս. Քիլիմչյան. Նշվ. աշխ., էջ 107։

50 Б. Б. Пиотровский. Кармир блур I, Ереван, 1950, рис. 22.

51 С. А. Есаян. Каталог археологических предметов музея истории гор. Еревана. Вып. II, Ереван, 1967, с. 115, табл. XXII, рис. 5.

52 Б. А. Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата, куро-аракский энеолит.—Вестник музея Грузии, вып. XIII, Тбилиси, 1944, табл. VII, рис. 1—7.

53 A. Erzen. Op. cit, p. 55—56.

54 Ս. Ա. Եսայան, Գ. Ս. Քիլիմչյան. Նշվ. աշխ., էջ 111։

55 Նույն տեղում, էջ 109։

միացման տեղում զարդարված են ոլորապտույտ նախշով։ Եվ վերջապես, առանց բռնակի սափորներից մեկը ունի ուռուցիկ իրան, կարճ վիզ, կլոր շուրթ, իսկ երկրորդը՝ ձգված իրան, կարճ նեղացող վիզ, կլոր շուրթ և հարթ նստուկ։ Այս սափորի իրանի վրա պահպանվել է վարպետի նշանը։

Պեղումների ժամանակ գտնվել են նաև 13 քոեղան ու մեկ գավաթ, որը պատած է դարչնագույն անգոբով, ունի ձգված իրան և կարճ սնամեջ ոտք[56]։ Բացի բրոնզե ու կավե սպասքից գտնվել են նաև մեկ պորֆիրիտե և երկու բազալտե թասեր։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայկաբերդում գտնված կնիքները։ Դրանցից մեկն ունի կշռաձարի ձև։ Չորս կողերին պատկերված են այծի գլուխներ ու նիզակներ։ Երկրորդը պրիզմայանման է։ Կողերից մեկին պատկերված է գավազանը ձեռքին մարդ, թերևս անհայտ աստված, երկրորդ կողին՝ առյուծի վրա կանգնած աստված։ Երրորդի վրա ցուլի վրա կանգնած աղեղնավորի սխեմատիկ պատկեր է և չորրորդ կողին՝ կարիճի վրա կանգնած աստված։ Վերջին պատկերը հետաքրքիր է, քանի որ այն ուրարտական կերպարվեստում չի հանդիպել։ Առյուծի ու ցուլի վրա կանգնած աստվածները Խալդին ու Թեյշեբան են։ Ինչ վերաբերում է կարիճի վրա կանգնած աստծուն, ապա հաշվի առներով, որ Հայկաբերդի տաճարներից մեկը Իրմուշինի աստծու տաճարն է, որը հովանավորում է բժշկությունը և Բ. Պիոտրովսկու այն կարծիքը, որ կարիճի պոչով մարդկանց արձանիկները պահպանում էին մարդկանց հիվանդություններից, ենթադրում ենք, որ կնիքի կողերին պատկերված են չորս աստվածները՝ Խալդին Թեյշեբան, Իրմուշինին և մեզ անհայտ աստվածը[57]։

Հաջորդ երկու կնիքներից մեկը պատկերում է ուլի և կենաց ծառի միջև կանգնած թևավոր աստվածուհու՝ երկու աղոթող էակների հետ[58]։ Երկրորդը՝ զոհարանի մոտ պառկած գլխատված մարդու, որի կողերը հստակ ընդգծվում են, հավանաբար վարպետը փորձել է ցույց տալ, որ զոհը մաշկազերծ է[59]։

Հայկաբերդի անկումը համընկնում է Ուրարտուի հզորության նվազման և անկման հետ։ Սկյութական նետասլաքները վկայում են այն մասին, որ գրոհից առաջ սկյութները հազարավոր այրվող նետեր են արձակել ամրոցի վրա՝ հրդեհելով այն։ Ինչպես ուրարտական խոշոր ամրոցներից շատերը, Հայկաբերդը նույնպես ընկել է մեդա-սկյութական արշավանքների ժամանակ։

Վան քաղաքից մոտավորապես 60 կմ հյուսիս-արևելք գտնվում է Կիչիկիրան ամրոցը։ Այն կառուցված է քառակուսի բլրի վրա և կրկնում է տեղանքի հատակագիծը։ Արևմտյան պատն ունի փոքր կորություն։ Հյուսիսային և արևելյան լանջերը անառիկ են և այստեղ ուղիղ կառուցված պարիսպները զուրկ են լրացուցիչ պաշտպանական շինություններից։ Արևմտյան և հարավային լանջերը թեք են և աստիճանաբար իջնում են դեպի դաշտավայր։ Դրանից ելնելով արևելյան պատը ամրացված է իրարից 20—25 մ հե-

---

56 A. Erzen. Op. cit., p. 34.

57 Ս. Ա. Եսայան, Գ. Ս. Քիլիմչյան. Նշվ. աշխ. էջ 114։

58 Նույն տեղում, էջ 112։

59 Б. Б. Пиотровский. История и культура Урарту, с. 274.

ռավորության վրա տեղադրված խոշոր աշտարակներով։ Հարավային պատը ամրացված է երկու աշտարակներով՝ տեղադրված հարավ-արևմտյան և հարավ-արևելյան անկյուններում։ Մուտքը դեպի ամրոց հավանաբար եղել է արևմտյան առաջին և հարավ-արևմտյան անկյունային պարիսպների միջև։ Ամրոցի ընդհանուր տարածքը (երկարությունը մոտ 15 կմ, լայնությունը՝ 125 մ) մոտ 2 հա է։ Պաշտպանական պարիսպները կառուցված են կիկլոպյան շարվածքով։ Ամրոցում գտնված խեցեղենը Զ. Բարսեյը թվագրում է ուշ բրոնզի դարով, թեև հնարավոր է համարում դրանց ավելի ուշ շրջանով (մ. թ. ա. IX դար) թվագրությունը[60]։

Վանա լճից հյուսիս-արևելք գտնվում է Դելիշայ կալեսին, որը կառուցված է համանուն գետի ձախ ափին։ Ամրոցը կառուցված է բարձր հրվանդանի վրա, հյուսիսից և արևմուտքից պաշտպանված է գետով, իսկ հարավից՝ Վանա լճով։ Ամրոցն ունի ուղղանկյուն հատակագիծ, մոտ 2 հա տարածքով (երկարությունը 150 մ, լայնությունը 120 մ) և բաղկացած է միջնաբերդից և ստորին քաղաքից։ Միջնաբերդը (երկ. 100 մ, լայն. մոտ 25 մ) կառուցված է ամրոցի հյուսիսային նեղացող ժայռանման ելուստի վրա։ Այստեղ պահպանվել են ինչ-որ շինության հետքեր, սակայն հետագա շինարարական աշխատանքները գրեթե ամբողջապես ծածկել են ուրարտական շրջանի կառույցները։ Ստորին քաղաքի պատերն ունեն 3 մ հաստություն և կառուցված են կիկլոպյան երկդրահանի շարվածքով։ Դեպի լիճ նայող հարավային պատերի վրա բացվել են հավասարաչափ հեռավորության վրա տեղադրված աշտարակներ։ Քաղաքային պարսպաշարի արևելյան մասում պահպանվել են դարավանդները, որոնք հավանաբար ծառայել են նաև որպես հենարան՝ լրացուցիչ ամրակառույց ամրոցի այս մասում։ Քաղաքի տարածքում պեղվել են 4×4 մ չափսով շինություններ, որոնք հավանաբար եղել են բնակելի տներ։

Կիչիկիրան և Դելիշայ ամրոցների նման Գառի ամրոցն էլ (Զալդիրան) գտնվում է Վան քաղաքից մոտ 85 կմ հյուսիս և բաղկացած է ամրացված միջնաբերդից ու ստորին քաղաքից։ Ամրոցը գտնվում է ձվաձև բարձունքի արևմտյան մասում։ Բարձունքի արևելյան մասում է ստորին քաղաքը, որը պաշտպանված չէ պարիսպներով։ Ամրոցն ու քաղաքը զբաղեցնում են մոտ 2,5 հա տարածություն։ Միջնաբերդն ունի ուղղանկյուն հատակագիծ, հյուսիս-արևելք ուղղվածությամբ։ Այն փոքր է, զբաղեցնում է մոտ 0,25 հա և պաշտպանված է կիկլոպյան երկդրահանի պարիսպներով։ Միջնաբերդը կառուցված է արհեստականորեն հարթեցված տեղանքի վրա, որը Զ. Բարնեյին հնարավորություն է տվել այն թվագրել մ. թ. ա. IX—VIII դդ.։ Ի տարբերություն միջնաբերդի, ամրոցը կրկնում է տեղանքի ձևը, որի հետևանքով հարավային և արևելյան պարիսպները գրեթե ուղիղ են, իսկ արևմտյան և հյուսիսային պատերը՝ լանջերի նման կտրտված։ Ամրոցը զբաղեցնում է 0,5 հա։ Այսպիսով, չնայած ամրոցի փոքրությանը, այն լավ ամրացված էր ինչպես բնական, այնպես էլ արհեստական միջոցներով և պատկանելով պահակային ամրոցների շարքին, միաժամանակ հանդիսացել է քաղաքային բնակչության պաշտպանական կետ, ինչպես Արարատյան դաշտավայրի Արագած,

[60] C. A. Burney. Op. cit., p. 48.

Օշական ամրոցները, որոնք պատկանելով Թեյշեբաինին և Արգիշտիխինիլին պաշտպանող ամրոցների թվին, խոշոր ուժերի հարձակման դեպքում հնարավորություն ունեին պաշտպանելու քաղաքացիական բնակչությանը մինչև կենտրոնից օգնություն ստանալը։

Վանի շրջանի հյուսիսային մասում գտնվող ամենաաշքի ընկնող ամրոցներից է Գործոթի բերդը (Քյութեղուտ)։ Այն գտնվում է Վան քաղաքից մոտ 68 կմ հյուսիս, անառիկ բլրի վրա։ Ամրոցը, որի հատակագիծը համապատասխանում է տեղանքին, բոլոր կողմերից շրջապատված է պաշտպանական հաստ պարսպաշարով, բացի հյուսիս-արևելյան մասի, որտեղ պարիսպները պարզապես չեն պահպանվել։ Պահպանված պատերի հաստությունը 4 մ է, տեղ-տեղ հասնում է մինչև 8 մ լայնության։ Հիմնաքարերը սրբատաշ են, 1 մ բարձրությամբ և 0,75 մ երկարությամբ։ Գործոթի բերդը գրավում է մոտ 4 հա տարածք։ Այն տեղադրված է կտրտված ձվաձև բարձունքի վրա, հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղվածությամբ։ Արևելյան և հյուսիսային հատվածները պաշտպանված են միաշար պարսպով։ Ծայր արևմտյան հատվածը թեք է, աստիճանաբար իջնում է դեպի հարթություն և պաշտպանված է միաշար պարսպով ու լրացուցիչ ամրություններով։ Այս մասում պարիսպը ամրացված է չորս խոշոր որմնահեցերով և մեկ խոշոր աշտարակով։ Ամրոցից դուրս, հարթության վրա կառուցված է մի խոշոր աշտարակ ևս, որը խոչընդոտում էր մուտքը դեպի ամրոց։ Հետաքրքիր է մուտքի պաշտպանական համակարգը։ Վերը նշված արևմտյան աշտարակից հարավ ձգվում է 70 մ պարսպաշար։ Նրան զուգահեռ հարավային պատն ունի աշտարակի դեր կատարող կիսակլոր ելուստ։ Այդ ելուստից 100 մ պարբսպին զուգահեռ դեպի ամրոցի խորքն է ձգվում 4 որմնահեցերով ամրացված պատ։ Այսպիսով, ամրոցի մուտքը կազմում է 100 մ աստիճանաբար լայնացող միջանցք՝ հարավում պաշտպանված կիսակլոր ելուստով, չորս որմնահեցերով և արտաքին պարսպաշարով։ Մուտքի այս սիստեմը բնորոշ է ինչպես ուրարտական (Կարմիր բլուրի արևմտյան մուտքը), այնպես էլ համաժամանակյա կիկլոպյան ամրոցներին (Աստղի բլուր, Օկոն և այլն)։

Վան քաղաքից մոտ 70 կմ հյուսիս, Արծկեից հյուսիս-արևմուտք գտնըվում է Զեռնակի բլուր (Զեռնակիթեփե) բնակավայրը։ Այն տեղադրված է բլրի վրա, ունի ուղղանկյուն հատակագիծ։ Քաղաքը պաշտպանող պարսպաշարը ունի ընդամենը 1,25 մ հաստություն և քարերի մի շարք։ Բնակավայրը զբաղեցրել է մոտ 5 հա տարածություն։ Այն կամ անավարտ կառույց է կամ էլ նման է Օշականի անպաշտպան բնակավայրին։

Քաղաքը կառուցված է նախօրոք գծված հատակագծով և 7 մ լայնության մեկ փողոցով բաժանվում է երկու մասի։ Մյուս փողոցների լայնությունը 5 մ է։ Որևէ ամրոց քաղաքի տարածքում չի գտնվել։ Զեռնակի բլուրը հետաքրքիր է տներով, որովհետև ուրարտական ամրոցներում և բնակավայրերում տներ քիչ են պեղվել (Կարմիր բլուրում, Բաստամում, Արգիշտիխինիլիում)։ Զ. Բարնեյը աշխատել է այս բնակավայրում, պեղել է տների մի ամբողջ համալիր։ Այստեղ կենտրոնական դահլիճի շուրջը խմբավորվում են մի քանի միջանցիկ սենյակներ։ Ամեն տուն (կացարան) միջանցքով բաժանվում է երկու մասի։ Ամեն մի միավոր իր մեջ է ընդգրկում մեկ քառակուսի, երկու ուղղանկյուն և երկու նեղ միջանցքատիպ սենյակներ։ Ինչպես

տեսնում ենք, Զեռնակի բլուրի կացարանները երկսենկցիոն են, որոնք հայտնի են Կարմիր բլուրից։ Հայտնի են և բաղմասենկցիոն բնակավայրեր Օշականում, Արաղածում, Արգիշտիխինիլիում, Թեյշեբաինիում, Բաստամում։ Սակայն Զեռնակի բլուրում առաջին անգամ է դիտվում նախօրոք կազմած հատակագիծ և փողոցների հստակ ընդգծվածություն։

Զեռնակի բլուրում գտնված խեցեղենը թույլ չի տալիս բնակավայրը ստույգ թվագրել։ Սակայն կառուցողական տեխնիկան խոսում է այս հուշարձանի ուրարտական շրջանին պատկանելու մասին։

Ավարտելով Վանա լճի ավազանի բիայնական ամրոցների ամփոփ նկարագրությունը, հարկ ենք համարում կանգ առնել ևս մի հուշարձանի վրա, որը հայտնի է միայն մեկ գտածոյով։ 1936 թ. Հայաստանի Պետական թանգարանը Լևոն Արմենյանից, որը երկար ժամանակ բնակվել էր Վանում, գնել է մի բրոնզե արձան, որը, նրա խոսքերով, գտնվել է Դարաբեյ ամրոցի փլատակներից[61]։ Այդպիսի ամրոց ո՛չ հնագիտական, ո՛չ էլ հին ռուսական ու թուրքական ռազմական քարտեզների վրա չի նշվում։ Բ. Հարությունյանի կարծիքով դա կարող է լինել միայն Վանից 35—40 կմ հյուսիս գտնվող Դարաբեկ լքված հայկական գյուղի մոտ ռուսական ռազմական քարտեզի վրա նշված փլատակները, որոնք ըստ երևույթին պետք է լինեին խոշոր ամրոցի փլատակներ՝ ելնելով արձանիկի բացառիկ գեղարվեստական արժեքից։ Արձանիկը ունի 12 սմ բարձրություն և պատկերում է երկար հագուստով, նստած կնոջ, գլուխն ու մեջքը ծածկված գլխաշորով։ Կուրծքը զարդարված է խաչով ու նստած առյուծի պատկերով։ Աջ ձեռքի ափը բաց է, ձախը՝ սեղմված, բայց ձախ ձեռքի մեջ եղել է ինչ-որ իր, որը չի պահպանվել։ Արձանիկը իրենից ներկայացնում է բարձրարվեստ իր։ Վարպետը խիստ մանրամասն տվել է կնոջ բարդ հագուստը և նրա դեմքը։ Այս արձանիկը հավանաբար պատկերում է Խալդիի կնոջը՝ Առուբանիին։

Ինչպես երևում է նկարագրությունից, Վանի թագավորության մայրաքաղաքը (ինչպես Վանի ամրոցը, այնպես էլ Թոփրակկալեն) խիստ պաշտպանված է եղել բազմաթիվ ամրոցներով։ Այսպիսի հզոր ամրոցների կառուցումը, որը հանդիսանում է Ուրարտուի ներդրումը համաշխարհային ռազմաշինարարության գործում, հնարավորություն է տվել պահպանել երկրի կենտրոնը արտաքին արշավանքներից։ Եվ իրոք, այդ պետության մոտ 300 տարվա գոյության ընթացքում միայն Թիգլաթպալասար III-ը կարողացավ հասնել Վանի ամրոցին, բայց չկարողացավ այն գրավել։ Անգամ Սարգոն II-ը, որն ավերեց Ուրարտուի հիմնական մարզերը, հիշելով Թիգլաթպալասարի անհաջողությունը, խուսափեց մոտենալ Թոփրակկալեին։ Այսպիսի պայմաններում Ուրարտուն միշտ հնարավորություններ էր ունենում վերականգնել իր իշխանությունը երկրի այլ մարզերի վրա և միայն մ. թ. ա. VII դարի վերջին, մեդական արշավանքների ժամանակ է, որ ընկնում է Վանի թագավորության մայրաքաղաք Տուշպան։

---

[61] Б. Б. Пиотровский. Урартская бронзовая статуэтка Гос. Музея Армении.—Советская археология, вып. 6, М.-Л., 1940, с. 89.

БИАЙНИЙСКИЕ КРЕПОСТИ БАССЕЙНА ВАНА
(из серии Урартские памятники Западной Армении)

Доктор ист. наук С. А. ЕСАЯН, Л. В. АБАДЖЯН

Резюме

Столица Биайнили—Тушпа, а также бассейн озера Ван, являвшийся центральным регионом страны, был наиболее укрепленной частью Ванского царства. На всех дорогах, ведущих к столице, были построены как небольшие крепости (Лезк, Гарни, Еришат, Горцот и др.), которые вели наблюдения за дорогами и предназначались для небольшого гарнизона, так и крупные (Арцке, Верхний и Нижний Андзав, Айкаберд и др.) военно-административные и хозяйственные центры с цитаделями и городскими поселениями. Наземный осмотр, съемки и раскопки, проведенные многими археологами, дали богатейший материал, на основе которого проведены анализ и интерпретация археологического материала и уточнены формы сооружений. В статье также восстановлены армянские названия многих крепостей.